**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ՀՀՊԾ-ԳՀԾՁԲ-26/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **20 մարտի 2026թ.**

2026թ-ի մարտի 18-20-ը ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում տեղի ունեցավ փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման ՀՀՊԾ-ԳՀԾՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Իգիթյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Մ. Համայակյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի փորձագետ, |
| Է. Տոնիկյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ, |
| Ա. Գրիգորյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի փորձագետ, |
| Վ. Մելքոնյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Իգիթյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

2. Ընթացակարգին ներկայացված հայտերի մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի մարտի 18-ին, ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ | 514,000.00 |

Ընթացակարգի հայտերի բացումը նախատեսված էր www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:
Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի մարտի 18-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:
Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ-ի մարտի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Իգիթյան ____________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Մ. Համայակյան ____________________

Է. Տոնիկյան ____________________

Ա. Գրիգորյան ____________________

Վ. Մելքոնյան ____________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________________